## ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

*Ներքոնշյալ հաստատությունների և կազմակերպությունների կողմից փախստականներին տրամադրվող ծառայություններն անվճար են:*

### ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն

Միգրացիոն պետական ծառայությունն իրականացնում է փախստականի կարգավիճակ ստացած անձանց՝ Հայաստանում ինտեգրմանն ուղղված աշխատանքներ:

**Հեռ.՝ +374 60 27 50 08**
**Հասցե՝ Երևան 0037, Կ.Ուլնեցու 31**
**Էլ. փոստ՝ externalrelations.sms@gmail.com**
**Կայք՝ www.smsmta.am**

### ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Պաշտպանը նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

**Հեռ.՝ +374 10 53 76 51**
**Հասցե՝ Երևան 0002, Պուշկին 56ա**
**Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am**
**Թեժ գիծ՝ 116**
**Կայք՝ www.ombuds.am**
**ՖԲ էջ՝ https://www.facebook.com/Armenianombudsman/**

### Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀՊԳ)

ՀՊԳ-ն տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականներին:

**Հեռ.՝ +374 10 60 07 14**
**Հասցե՝ Երևան, 0010, Զաքյան 7/2, երկրորդ հարկ**
**Էլ. փոստ՝ pashtpan@advocates.am**
**Կայք՝ www.advocates.am**

### Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) Հայաստանյան գրասենյակ

Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ) Հայաստանյան գրասենյակն իրականացնում է Միգրացիոն պետական ծառայության կողմից ապաստանի դիմումների քննության մշտադիտարկում և հատկացնում է անհրաժեշտ աջակցություն՝ ապահովելու ապաստանի տրամադրման պատշաճ ընթացակարգը: ՄԱԿ ՓԳՀ-ն լրացնում է Կառավարության ջանքերն ուղղված ապաստան հայցողների, փախստականների և այլ տեղահանված անձանց նվազագույն կարիքների ապահովմանը և աջակցում է առողջապահության, կրթության և զբաղվածության ոլորտներում խնդիրների լուծմանը՝ իրականացնելով ծրագրեր գործընկեր կազմակերպությունների միջոցով:

**Հեռ.՝ +374 91 41 53 87; +374 54 59 37**
**Հասցե՝ Երևան 0010, Պետրոս Ադամյան 14**
**Էլ. փոստ՝ armye@unhcr.org**
**Կայք՝ www.un.am/hy/agency/UNHCR**
**ՖԲ էջ՝ https://www.facebook.com/UNHCRArmenia/**

### Հայկական կարմիր խաչի ընկերություն (ՀԿԽԸ)

ՀԿԽԸ-ն ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրում է խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպում է տեղեկատվական միջոցառումներ: Այն իրականացնում է նաև այցելություններ պետական սահմանի անցման կետեր և Սահմանապահ զորքերի համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ:

**Հեռ.՝ +374 60 62 50 50, +374 60 62 50 63**
**Հասցե՝ Երևան 0015, Պարոնյան 21/1**
**Էլ. փոստ՝ arcs-pm@redcross.am**
**Կայք՝ www.redcross.am/hy**

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

## *Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ*

**Նոյեմբեր 2017**

## Ի՞նչ իրավունքներ ունի փախստականը

• Փախստականի կարգավիճակ ունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) քաղաքացիներին հավասար իրավունքներ, բացառությամբ՝ խորհրդարանական, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և հանրաքվեներին (օրենքով նախատեսված դեպքերում) մասնակցելու, որևէ կուսակցության անդամագրվելու, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոնի ընտրվելու կամ նշանակվելու, ինչպես նաև հողի սեփականության իրավունքներից:
• ՀՀ սահմանադրության համաձայն՝ Դուք պաշտպանված եք Ձեր ռասայի, կրոնի, ծագման երկրի կամ որևէ այլ հիմքով պայմանավորված խտրական մոտեցումից:
• Դուք ունեք սեփական կրոնն ազատորեն դավանելու և Ձեր երեխաների կրոնական դաստիարակությունն ընտրելու իրավունք:
• Դուք՝ որպես փախստական, չեք կարող արտաքսվել կամ որևէ կերպ վերադարձվել այն երկիր, որտեղ կա իրական սպառնալիք, որ Դուք կարող եք ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ազգային անվտանգության պաշտպանության կամ հասարակական կարգի պահպանության համար:

*Դուք՝ որպես փախստական, ունեք՝*

• ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (հասցե՝ Դավթաշեն, 4-րդ թաղամաս 17/10 շենք) ՀՀ քաղաքացիության դիմում ներկայացնելու իրավունք:
• ՀՀ քաղաքացիներին հավասար Ձեր բնակության վայրն ընտրելու և ազատ տեղաշարժվելու իրավունք:
• Ձեր Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով Հայաստանից դուրս ճամփորդելու հնարավորություն, եթե ստանաք համապատասխան երկրի մուտքի արտոնագիր:
• Աշխատանքի և Հայաստանի տարածքում աշխատանք փնտրելու իրավունք: Դուք կարող եք փնտրել աշխատանք ինքնուրույն կամ դիմել աշխատանքի պետական և մասնավոր գործակալություններ՝ ՀՀ քաղաքացիներին հավասար պայմաններով աշխատանք փնտրելու նպատակով:
• Ծարժական և անշարժ գույքի ձեռքբերման, ինչպես նաև սեփականության իրավունք:
• Դուք կարող եք նաև դիմել Միգրացիոն պետական ծառայություն՝ Ինտեգրացիոն կենտրոնում ժամանակավոր ապաստան, ինչպես նաև պետական աջակցությամբ բնակարաններ ստանալու համար, որը կտրամադրվի ազատ սենյակների առկայության դեպքում՝ իբրև Հայաստանում Ձեր ինտեգրումը խթանելու միջանկյալ միջոց:
• ՀՀ քաղաքացիներին հավասար սոցիալական աջակցություն, ներառյալ՝ ընտանեկան պետական նպաստ (ենթակա է անհատական գնահատման), հաշմանդամության պետական նպաստ (ենթակա է բժշկական զննման, նպաստի չափը կազմում է 16,000-ից 22,000 ՀՀ դրամ), ինչպես նաև կենսաթոշակ ստանալու իրավունք (նվազագույն կենսաթոշակը կազմում է 16,000 ՀՀ դրամ և տրամադրվում է 65 տարեկանից բարձր կանանց և տղամարդկանց):
• ՀՀ քաղաքացիներին հավասար պայմաններով անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Դրանք ներառում են բժշկական շտապ օգնությունը, պետական աջակցությամբ սահմանափակ ծառայություններ պոլիկլինիկաներում և հիվանդանոցներում: Դուք ունեք նաև ՀՀ քաղաքացիներին հավասար վճարովի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:
• Հանրային դպրոցներում անվճար, իսկ մասնավոր դպրոցներում վճարովի միջնակարգ կրթության իրավունք, ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին հավասար մասնագիտական և բարձրագույն կրթության իրավունք (ներառյալ դրամաշնորհի դիմելը և պետական աջակցությամբ կրթական ծրագրեր մասնակցելը):
• Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Խնդրում ենք կապ հաստատել Հանրային պաշտպանի գրասենյակի հետ (կոնտակտային տվյալները կարող եք տեսնել առաջին էջում):
• ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան ներկայացուցչություն և Հայկական կարմիր խաչի ընկերություն դիմելու իրավունք:
• Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունք:

## Ի՞նչ պարտավորություններ ունի փախստականը

*Դուք՝ որպես փախստական, պարտավոր եք՝*

• Պահպանել Հայաստանի Հանրապետության օրենքները և հասարակական կարգը:
• Վճարել հարկեր, տուրքեր և այլ պարտադիր այլ վճարներ, ինչպես ՀՀ քաղաքացիները:

## ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմելը

• Յուրաքանչյուր ոք, ներառյալ փախստականները, ինչպես նաև յուրաքանչյուր իրավաբանական անձ ունեն Պաշտպանին դիմելու իրավունք:
• Եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կամ հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից, ապա կարող եք դիմել Պաշտպանին:
• Ձեր բողոքը կքննարկվի, եթե այն ներկայացրել եք մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ իմացել եք կամ պետք է իմացած լինեիք Ձեր իրավունքների ենթադրյալ խախտման մասին:
• Բողոքը կարող եք ներկայացնել յուրաքանչյուր լեզվով ինչպես գրավոր (թղթային կամ առցանց), այնպես էլ բանավոր եղանակով:
• Ձեր բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Պաշտպանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
1. բողոքը քննարկման ընդունելու մասին.
2. բողոքը չքննարկելու մասին.
3. բողոք ներկայացրած անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.
4. բողոքն այլ մարմնի քննարկմանը փոխանցելու մասին:
• Բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանի կողմից ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝
1. Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման մասին՝
2. Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման բացակայության մասին՝
3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին՝
4. Բողոքի քննարկումը դադարեցնելու մասին:
• Նշված որոշումներից առաջինի հիման վրա Պաշտպանը խախտում կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար անձին կամ կազմակերպությանն առաջարկում է ողջամիտ ժամկետում վերացնել խախտումը՝ նշելով մարդու իրավունքների կամ ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները: